



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2017 թվականի N 141 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱԶԱԶՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՅԳԵՀՈՎԻՏ ԵՎ ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 29-ի ՀՀ 2017 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 59-Ա որոշմամբ

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Աչաջուր համայնքում համայնքի ղեկավարի, Այգեհովիտ և Ենոքավան համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2017թ. նոյեմբերի 5-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին. Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին. Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 37 և թիվ 38 տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման 2017թվականի օգոստոսի 25-ից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ